



22. ԿԱՐԱ - ՕՂԼԱՆ

Պառաձ մի կեղնի ու ծուռ տղե մի, անուն Կարա-օղլան: Կերթան թակավորին խաբար կիտան, թե պառվուն ըմլա ծուռ տղե մի կա:

Էտ թակավորի ախչիկ քառսուն տարեկան կ'էլնի, մարդ չի՝ տանն:

Կ'էլի թակավորի ախչիկ կըսե. - Թակավոր ապրած կենա, ծուռն տեր էլեք, կը խելացանա ծուռ:

Կըսե. - Օր էդ հըմլա է, կանի քզի պոնինք տանք ծուռն, խի՞, ծուռ խելացանա, դո՛ւ տեր էլի:

Էրկու կավազ կը ճամբե, կըսե. - Գնացե՛ք Կարա-օղլան բռնեք բերեք զիմ ախչիկ փսակին վրեն:

Ինատ է էրեր, ուր ախչիկին, իմալ կենա:

Կավազներ կերթան կը տեսնան Կարա-օղլան գերեզմներ խաչքրի վրեն խեծուկ է, կը քշե, ծի է:

Կըսե. - Թակավորի խեր անիծած, ի՞նչ կուզե ընծնե, ես չիմ իզա թակավորի քով:

Կը բռնեն, զոռով կը բերեն թակավորի քով:

Դանդակ է կ'էլի զախչիկա ձեռ բռնե, կիտա ծուռն: Ծուռ կառնե զթակավորի ախչիկ, կիզա:

Թակավորի ախչիկն է, կիզա կը մտի պառվու տուն: Աղքատ, կես մի տիլ խող:

Թակավորի ախչիկ կըսե. - Փրկյալ տեր ընծի ծուռց պտի փրկե:

Կիսրոջ կըսե. - Նա՛նա, իմ կեսրերին ըսե՝ էրկու խուրձ ընծի չիջնիս-նիկ թը բերա:

Կըսե. - Խալիվոր, քու հարս ի՞նչ կը խնդրե. երկու խուրձ չիջխընկի ուռ, իրեք կուժ ջուր, ծռու դեղ էն է:

Կը բերե, մեկ խրձան տեղ իրեք կը բերե:

Կըսա. - Օր թակավորի ախչիկ հրաման երեր է, ուռի քամա՞ ինչ է:

Ու իրեք կուժ ջուր կը բերե, Կարա-օղլան կիզա տուն:

Կըսե. - Կարա-օղլան, քըզի մատաղ, էնա մախաթ սնեն ա՛ն տու, խի:

Կըսե. - Չա՛յ, թակավորի ախչիկ, հըմլա-հըմլա էնեմ, ես ընչի մախաթ կիտամ քզի:

Կէլի իր տեղեն, կը բռնա Կարա-օղլան դայիմ մի կը կապե: Կէլի շորեր բոլոր կը խանա վերեւն: Սերսուփ ջուր կը լցա վրեն ու կը ծեծե չիջխընկի ուռով, կը զարկե: Քանի օր չըջխընկի ուռ կա՝ ջուր կը լցե ու կը զարկե: Կարցկե, տանի թալա ծիու փայիմ, իրեք ավուր սորա էտ ծուռ կ'էլի գա:

Թամալե մի կը թալե թակավորի ախչկան, ծառայութեն կէնա, կը կայնի: Կը տանի հավուզ կը լողկցու զէտ ծուռ: Բերե շորեր կը հագու, կէրթա ռեսի հօդի դուռ, կը կայնի:

Տեսնա ծանդր թակավորական բազրկա մի էնդիեն կիզա:

Կըսե. - Կտրիճ մի կա՞ հողա, էրթանք չուր Կլաթա թեղուտ, ուրիմ խնձար դուրուշ փարա կիտամ:

Կէլի կըսե. - Թակավորի՛ ախչիկ, ի՞նչ կը հրամանես: Բազրկանքաշի կըսե. «Չուր Կլաթա թեղուտ խնձար դուրուշ կիտամ», - էրթա՞մ, թե՛ չէրթամ:

- Ես, - կըսե, - կը հրամանեմ քառսուն փարա լե եղնի՝ դատում է աշխատանք: Կը հրամանեմ՝ հնալե ինչքան քու կաթ կը վերու, քու կաթի գորա գրուցե:

Տեսնա օր ջրու մի ձեն կիզա: Ջրու ձեն օր կամնին գիրար կուտին էտ բազրկանի ծիանք:

Բազրկանքաշի կըսե. - Չայ, կտրիճ, կընա՞ս ջուր հանես գետնի տակեն իմ ծիան, քզի հազար կուռուշ փարա կիտամ:

Տղեն էմ մզիլ մի կէրթա, կը տեսնա ծակ մի կա էտ գետնի տակ: Կիչի էդ գետնի տակեն ջուր կը քաշե, ծիան բիրադի կը ջրե: Տեսնա օր իրեք հատ հուրի-փարի նստուկ են վըր էտա ջրին:

Վերցե մեկ քուր կըսե. - Չա՛յ, ծուռ տղա, էսա իրեք քուրոջ մեջե՛ ո՞ր մեկս եմք խորոտ:

Չէ՞ թակավորի ախչիկ հրամաներ է՝ քու կաթի գորա գրուցե: Կը վերցու կըսե. - Ամեկ օր սրտի մեջ ինք խորոտ:

- Ապրի՛ս, - կըսե, - ծո՛ւռ տղա, ա՛ն էսա իրեք նուռ, խնձար կուռուշ լե քզի բախշիշ, աղորթ օր ամեկ մըջ ուր սռտից՝ ինք խորոտ:

Էլավ բազրկանբաշին ըսեց. - Օղո՛ւլ, կիգաս Բաղեշու քաղաք էրթանք, քզի հազար դուրուշ փարա կիտամ:

Ըսեց. - Հա՛, հորի՞ չիմ գա. դատման է, կիգամ:

Էլավ, տեսավ ուրենց գեղեն տղե մի կերթա, հազար դուրուշ փարա ու նուռ մի տվեց:

Ըսեց. - Տարեք տվեք թակավորի ախչկան, հարի ես կերթամ Բաղեշու քաղաք, կիգամ:

Էրեր էտ տղեն ըսեց. - Թակավորի՛ ախչիկ, քու իրիկն է ճամբե, գէս հազար դուրուշ ու զնուռ:

Էլավ, մարթ չկա տուն, կիսուր-կեսրեր տուն չեն, ինք միմակ է*, դանակ բերեց օր զնուռ ուտե, նոի խափախ վերուց, տեսավ օր անգին քար է:

- Ծռու աղուն Աստվա՛ծ կաղա, - ըսեց, - ջանըմ, էդ անգին քար նուռ թակավորներուն չկա՛, էդ հո՞ւստեն էլավ էդ ծռուն:

Կեսրերն էկավ տուն, ըսեց. - Կեսրեր, առ իդա անգին քար, գնա Բաղեշու քաղաք, կտրե խնձար հատ քար, դու չըզինաս էդ անգին քարի ֆիաթ: Առ խնձար հատ էլ ուսթա, սարե մի շինիմք:

Ուսթա բերեց, քար բերեց, սարեն շինեց զավալի ծուռ հալա չէկեր Բաղեշու քաղքեն:

Էլավ Կարա-օղլան էկավ Բաղեշու քաղքեն:

Ըսեց. - Մա՛յրիկ, քու տղեն էկի կայներ դուռ, էլի դուռ բաց, թ՛իգա ներս:

Ավալքվան տուն քոխ էր, մկա էլե թակավորի սարա, չի ճանչնա զտուն:

Էկավ թամալե մի թալեց: Ըսեց՝ նստի:

Ըսեց. - Հրամանե՛ օր նստիմ:

Ըսեց. - Իրեք խազար կիւռիւշ իմ դատեր ու էրկու նուռ, ա՛ն էտ նուռ ու կեր:

Էլավ, գիշեր պառկավ ըսեց. - Թակավորի ախչիկ, քու զլխուն, արևուն դուրբան եմ, ես քզի ճամբեր եմ խնձար դուրուշ ու նուռ մի, էդ սարեն ի՞նչպես շինեցիր: Խնձար դուռուշով ու նուռով մի թակավորական սարա կը սուքվի՞:

* Բնագրում՝ միջակ (ծ.կ.):

Ըսավ. - Ա՞ռակ, էլ եղ նմանեց կա՞ մոտդ:

Ըսավ. - Էրկու լե կա եղ նման:

Ըսավ. - Քզնե կուզեմ, առնիս եղա քարեն, էրթաս Բաղեշու քաղաք
բերես քառսուն չաթալ, քառսուն փուչախ, քառսուն սինի, օսկի չաթալ,
օսկի փուչախ, օսկի սինի բերես, օր թակավոր բերենք մըր տուն զիաֆաթ:

Տղան առավոտուն էլնվ գնաց, էբեր:

Ախչիկ էլավ չորս խատ ոջալ քբար ճամբեց թակավորի ետև, ըսեց. -
Թ՛իզա իմ տուն զիաֆաթ:

Էլնվ թակավոր ըսեց. - Շան ո՛րդի, շան ցինած, զինք տվեր իմ ծոռու
մի: Ընծի կը տանի թաքլիֆ: Էլնիմ քառսուն ոջալ քբար տանեմ, էնոր էրես
սևնա, ձեռնեն բռնեմ, թալեմ ծով:

Թակավորն էկավ, ախչկե սարեն իշկեց, օր էրկու կաթ քընց ուր
սարեն է խորոտ է:

Մտավ ներս, նստան:

Ախչիկ տղին ըսեց. - Իմ հրաման էն է՝ գնա չարշուն, ձեռք մի
թակավորական հալավ առ, հագի, արի նստի թակավորի հառեք:

Թակավոր ըսաց. - Իմ ախչիկ հրաման ա, թի օսկի փուչախ, օսկի
չաթալ մըջ օսկի սինուն՝ իմ հոր բախշիշ էլնի:

Ըսեց. - Թակավորից հրաման է՝ ամեկ ուր հառեջու օսկի փուչախ,
օսկի չաթալ մըջ օսկի սինուն՝ ուրին խլդաէ էլնի:

Վերուց թակավոր օսկի չաթալ ու փուչախ մըջ սինուն ու զրկի տակ
դրեց:

Էլնվ ըսեց. - Թակավոր ապրած կենաս, էսի էն Կարա-օղլան ծուռ
տղեն է, օր ընծի տվիր ուրին:

Էլավ ըսեց. - Ի՞նչ կիտաս Կարա-օղլանին բախշիշ:

Թակավոր զուր սարենէլ էտու բախշիշ:

Էնի խասավ ուր մուրագին, դուն էլ՝ քոն:

